Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Յունուար 2018
Լրատու թիւ 11

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

2017 թուականի սեպտեմբերի 10-ին սկսուեց 2017-18 ուսումնական տարին, թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիներն ու հոգաբարձուները մեծ խանդավառութեամբ և ոգևորութեամբ սկսեցին նոր ուսումնական տարին:

ՎԱՆ

Շնորհաւորում եմ բոլոր աշակերտներին և ուսուցիչներին, ծնողներին ու հոգաբարձուներին նոր ուսումնական տարւայ առթիւ, ցանկանում եմ որ այս տարի լինի հետաքրքիր, յայտնութիւններով հարուստ և յաջողութիւններով լի ուսումնական տարի:

ԿԱՐՍ

Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն ուսում փոխանցող կառոյց չէ այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է: Եկե՛ք, բոլորս միասնաբար աշխատենք, սովորենք, պահենք և պահպանենք մեր դարաւոր մշակոյթը, լեզուն, պատմութիւնը, կրոնը և մեր հայի ոգին:



2017թ դեկտեմբերի 10-ին աւարտուեց առաջին եռամսեակը. . .

2017-18 ուսումնական տարւայ առաջին եռամսեակի ընթացքում կատարուած աշխատանքների մասին Դուք կկարդաք այս համարում:

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատասխանատուներին:

Ամանորին ընդառաջ բոլորս ամփոփում ենք անցնող տարին, նոր ծրագրեր և պլաններ կազմում գալիք տարուայ համար:

Շնորհաւորելով Ամանորի և Սուրբ Ծննդի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն և իրականութիւն դառնան Ձեր բոլորի նպատակներն ու երազանքները: Թող 2018 թուականը մեր հայրենիքի և աշխարհի համար լինի խաղաղութեան և առաջընթացի տարի:

2018թ յունուարի 7-ին կը վերսկսուեն վարժարանի երկրորդ եռամսեակի աշխատանքները:

Վարժարանի տնօրինուհի՝
Ռուզաննա Թաթուլեան

Շնորհաւոր Նոր Տարի
և
Սուրբ Ծնունդ

Վերամուտ

Կիրակի, սեպտեմբեր 10-ի առաւօտեան մեր դպրոցի շէնքը յատուկ եռ ու զեռ էր ապրում: Երկու ամսւայ դադարից յետոյ վերսկսւում էին կիրակնօրեայ դպրոցի դասընթացները: Ծնողներ, աշակերտներ, ուսուցիչներ քիչ-քիչ լցնում էին սրահը: Շատ հաճելի էր արձակուրդներից յետոյ վերստին միմեանց գտնելը: Խօսելու և պատմելու այնքա՛ն բաներ կային: Սակայն ժամի 10:30-ին հնչեց Տիկին Մայդաի նշանաւոր զանգը: Տեսչուհին՝ Տիկին Ռուզաննա Թաթուլեանը աշակերտներին հրաւիրեց շարք կազմելու՝ ուսուցչուհիների առաջնորդութեամբ: Երբ արդէն բոլորը համախմբուած էին, Տիկին Թաթուլեանը բարի գալուստ մաղթեց Ցանկանալով ամենքին ուժ ու կորով և յաջող ուսումնական տարի:

Հայր մերը և մեր հայրենիքի հիմնը երգելուց յետոյ, տեսչուհին յայտարարեց իւրաքանչիւր դասարանի նոր դասատուի անունը, որից յետոյ ուսուցչուհիները, հոտ առաջնորդող հովւի պէս աշակերտներին ուղեկցեցին դէպի իրենց դասարանները:

Դպրոցն իր հունի մէջ մտաւ:

Կորով և յաջողութիւն ձեզ սիրելի աշակերտներ, որպէսզի կարողանաք այս օտար երկրում, դէմ գնալով բոլոր դժուարութիւններին, սերտէ՛ք ձեր մայրենի լեզուն, ձեր այբ-բեն-գիմը:

Հայր մեր
որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն Քո
եկեսցէ արքայութիւն Քո
եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի
զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր,
թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
թողումք մերոց պարտապանաց
և մի տանիր զմեզ ի փորձութիւն
այլ փրկեա զմեզ ի չարէն:

After two months' break, the school reopened its doors on September 10th 2017. Teachers, parents and pupils were gathering in the school's hall that was buzzing with their chatter. It was exciting to reunite after the summer holiday; there was so much to discuss. At 10.30 Mrs Mayda rang the bell inviting the pupils to line up and then the headteacher, Mrs Ruzanna Tatulian, welcomed everyone and wished them all strength and energy to achieve a successful academic year. After the Morning Prayer and singing the National Anthem, the headteacher announced the class transitions and the teachers led their pupils to their classrooms. The school's bustle is truly underway.
We wish you all the success to enable you to deal with all the difficulties that face us in learning and upholding our mother tongue in a foreign land.

Մարդին Եորգանցի Այցելությունը

Հոկտեմբերի 8-ին Գ. Թահթայան Կիրակնօրյա Ազգային վարժարանի հյուրն էր Ֆրանսիահայ երգիչ Մարդին Եորգանցը: Նա իր հայտնի «Հայ երգ» և «Ճկուտիկ» մանկական երգերի կատարմամբ մեծ ուրախություն պարգևեց դպրոցի աշակերտներին և որոշ մեծահասակների հիշեցրեց իրենց մանկությունը: Աշակերտները Մ. Եորգանցին ճանապարհեցին նորից տեսնելու ակնկալիքով

The famous French-Armenian singer, Marten Yorgantz, visited the school on Sunday 8th October 2017. Mr Yorgantz sang some of his famous children's songs creating an exciting atmosphere and taking some of the adults back to their childhood. The children said their farewells before going back to class, hoping to see Mr. Yorgantz again one day.

Ծնողական Ընդհանուր Ժողով

The AGM of parents took place on October 15th. Chair of Governors, Mr Arenoosh Eskandari, welcomed all and introduced them to the new members of the governing body explaining their roles. Dr Tarverdi then read the minutes from the previous year's meeting and the headteacher, Mrs R. Tatulian discussed the school's structure and curriculum. Treasurer, Mr Garo Karabeyekian, presented the 2016-17 accounts and informed the parents that this academic year, the school's rent had gone up by 20%. In discussion, some parents suggested raising the annual tuition fees to help the school's financial situation. During the meeting, Mrs Lena Kulkhanjian presented by PowerPoint the previous year's activities and achievements that took place at school.

Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցաւ Վարժարանի ծնողական ընդհանուր ժողովը:

Վարժարանի հոգաբարձուների ատենապետ, պրն Արենուշ Իսկանդարին, ներկաներին բարի գալուստ մաղթելուց յետոյ, ներկայացրեց հոգաբարձուներին, նշելով իւրաքանչիւրի պարտականութիւնները:

Դկտ Գառնիկ Թարվերդին ընթերցեց նախորդ ժողովի ատենագրութիւնը, որի հաստատումից յետոյ, վարժարանի տնօրինուհի տիկին Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական ծրագիրը և վիճակը: Վարժարանի հաշուապահ պրն Կարօ Կարաբէեքեանը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարւայ վարժարանի ֆինանսական վիճակը:

Ծնողական յանձնախմբի ատենապետուհի տիկին Սևանա Ղարախանեանը ներկայներին բացատրեց վարժարանի համար ծնողական յանձնախմբի դերն ու նշանակութիւնը: Նա հորդորեց ծնողներին միանալ յանձնախմբին:

Տիկին Լենա Գիւլխանճեանը պատրաստել էր վարժարանի կատարած աշխատանքները ներկայացնող նկարների ցուցադրութիւն, որը մեծ հետաքրքրութիւն առաջացրեց ծնողների շրջանում:

Այլ հարցերի քննարկման ընթացքում, ծնողներն առաջարկեցին բարձրացնել ուսման վարձը:

Ի տեղեկութիւն ծնողներին, այս ուսումնական տարւայ սկզբից վարժարանի վարձակալութեան արժէքը բարձրացել է 20%-ով:

Թարգմանչաց Տոն - Celebrating our Language

Հոկտեմբերի 22-ին Գէորգ Թահթայան վարժարանում նշվեց Մշակույթի օրը: Բոլոր տարիքային խմբերի աշակերտներն իրենց մասնակցությամբ իմաստավորեցին հանդեսը, յուրաքանչյուրն յուրովի ներկայացնելով Հայ մշակույթի արժեքները:
Գէորգ Թահթայան վարժարանն իր հայրենանպաստ գործով ձգտում է Հայ մշակույթը հասանելի դարձնել Բրիտանահայ մանուկներին:

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ,
իմանալ զբանս հանճարոյ

On October 22nd, pupils of all ages participated in a special assembly dedicated to Mesrob Mashtots' creation of the Armenian Alphabet, the translators and our literary predecessors. The pupils sang and recited poems in celebration of the Armenian culture. The school tries hard to make the Armenian rich culture accessible to British-Armenian children

Տէր Շնորհք Բաղդասարեանի Այցելութիւնը

Ամիսը մէկ անգամ, Տէր Շնորհք Բաղդասարեանը այցելում է վարժարան և առաւօտեան աղօթքը ինչպէս նաև տեւալ օրուայ խորհուրդը բացատրում է երեխաներին:

As per tradition, once every half term, Fr Shnork Baghdassarian attended the School to convey his blessings to all. Also to discuss relevant feasts and explain their meaning as well as fundamental Christian Armenian values.

Տիկին Անուշ Նագաշեանի Այցելութիւնը

Նոյեմբերի 19-ին վարժարան այցելեց տաղանդաւոր բանաստեղծուհի, մանկավարժուհի, ասմունքող տիկին Անուշ Նագաշեանը:

Առաւօտեան տիրունական աղօթքից յետոյ, վարժարանի տնօրինուհի տիկին Ռուզաննա Թաթուլեանը աշակերտներին ներկայացրեց և բեմ հրաւիրեց տաղանդաւոր բանաստեղծուհուն:

Տիկին Նագաշեանի յուզիչ խօսքերը և իր գրած բովանդակալից բանաստեղծութիւնների հրաշալի կատարումները շատ տպաւորիչ էին և մեծ դաստիարակչական նշանակութիւն ունեցան աշակերտների համար: Նա արտասանեց իր գրած մանկական "Ես Հայ եմ" գրքոյկից մի քանի բանաստեղծութիւններ:

Տիկին Նագաշեանը այդ գրքոյկից մի քանի օրինակ նուիրեց վարժարանի ցածր և միջին դասարանների ուսուցչուհիներին:

Այնուհետև տաղանդաշատ բանաստեղծուհին հանդիպեց բարձր դասարանների աշակերտների և ուսուցչուհիների հետ:

"Հայրենիքը իմ էութիւնն է, ես չեմ կրնար անհայրենիք մարդ պատկերացնել: Հայրենիքը իմ պապերուս կառուցածն է, իմ պապերէս ժառանգածն է, եւ այն է Հայրենիքը, որ ես պիտի ձգեմ իմ ժառանգներուն: Ամէն մարդ կրնայ տասնեակ զարդեր ունենալ, բայց իւրաքանչիւրը ադամանդ մը պիտի ունենայ՝ իր մեծ մօրմէն ժառանգած: Հայաստան այն ադամանդն է, որ ես ժառանգած եմ իմ մեծ մօրմէս, իմ պապերէս:"- Անոյշ Նագաշեան:

Mrs Anoush Nakashian's Visit to School

On November 19th, the accomplished Armenian poet, writer and educator from Jerusalem, Mrs Anoush Nakashian visited the school.

After the morning prayer, the head-teacher, Mrs Ruzanna Tatulian, introduced the talented poet to the pupils and invited her to the stage.

Mrs Nakashian's touching words and her remarkable recitation of her poetry were impressive and had an educational impact on the pupils. She recited from her children's book of poetry "I am Armenian" and donated copies of the book to the teachers of the middle and lower school.

Eventually, Mrs Nakashian visited the upper school's pupils and their teachers in their classrooms. The talented poet and writer discussed her latest book "I was the Seed" which is about her grandmother and her heritage.

"My homeland is my essence; I cannot imagine a person without a homeland. My homeland is my inheritance, and that is the homeland that I will leave to my heirs. Everyone can have ten ornaments, but each one will have a diamond inherited from his grandmother. Armenia is the diamond I inherited from my grandmother and my grandfather." Anoush Nakashian

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Ամանորի Հանդէս

Նոր Տարվա հանդեսը Գ. Թահթայան վարժարանի ամենահաճելի հանդեսներից մեկն է: Այս տարի հանդեսը կայացավ դեկտեմբերի 10-ին: Հանդեսը սկսվելուց առաջ սրահում կար տոնավաճառ, որի ընթացքում հյուրերը համտեսեցին տոնական համեղ ճաշատեսակներ:

Ինչպես միշտ Զմեռ Պապիկին մեծ խանդավառությամբ դիմավորեցին թէ փոքրերը և թէ մեծերը: Յուրաքանչյուր աշակերտ, գեղեցիկ բանաստեղծություն, երգ, պար կամ բեմադրություն ներկայացնելուց հետո ստացավ իր հասանելիք նվերը: Նվերներով տուն վերադարձան նաև հյուր երեխաները:

Գ.Թաթայան վարժարանի տնօրենուհի տիկ Ռուզաննա Թաթուլյանը վարժարանի կողմից խորին շնորհակալությունը հայտնեց բոլոր բարերարներին՝ իրենց բարի ու հայրենանվեր գործերով դպրոցին միշտ աջակից լինելու համար:

The 10th December, the most exciting day was the last day of term as it was the time when a visit from Santa was expected.

Prior to the Christmas performances in the main hall, the canteen was filled with festive spirit; parents, guests and children were enjoying the Christmas Bazaar and the delicious food prepared by the Parents' Association.

At 1 p.m., the Children welcomed Santa clause with festive songs and then danced, sang and recited poems for him. In appreciation, Santa gave presents to all the children.

The headteacher, Mrs Ruzanna Tatulian, thanked everybody who supported this event as well as all the school's teachers, benefactors and friends for always supporting the school. She also wished everyone a very happy and healthy New Year and a Merry Christmas.

2017-2018 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 10 Սեպտ. 2017 – 10 Դեկտ. 2017 Term I 10 September 2017 – 10 December 2017	
10 Սեպտեմբեր 10 September	Վերամուտ Back to school
15 Հոկտեմբեր 15 October	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
22 Հոկտեմբեր 22 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
29 Հոկտեմբեր 29 October	Արձակուրդ Half-Term Break
10 Դեկտեմբեր 10 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 7 Յունուար 2018 – 18 Մարտ 2018 Term II 7 January 2018 – 18 March 2018	
03 Փետրուար 03 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
11 Փետրուար 11 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
18 Փետրուար 18 February	Արձակուրդ Half-Term Break
11 Մարտ 11 March	Մայրերու Օր Mothers' Day
18 Մարտ 18 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 15 Ապրիլ 2018 – 8 Յուլիս 2018 Term III 15 April 2018 – 8 July 2018	
29 Ապրիլ 29 April	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
20 Մայիս 20 May	Մարզական Օր Sports' Day
27 Մայիս 27 May	Արձակուրդ Half-Term Break
24 Յունիս 24 June	Դաշտահանդէս School BBQ
8 Յուլիս 8 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան, Տիկ Նայիրի Ստեփան Սարգսեան,
Օրդ Վանուհի Պետրոսյան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան